

ՍԻՐՈ ՉԲԱՆԱԶԵՎԸ
(պատմվածք)

ՄԵՐՈՒԺԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Սուրբ Սարգսի օրվա առիթով, 2007 թվի հունվարին, Հայոց եկեղեցու մի կազմակերպություն հայտարարեց, թե «Սիրո բանաձեվը՝ վերնագրով էրկու էջանոց պատմվածքի մրցույթ ա հայտարարում, ու որ առաջին մրցանակն էլ 200 000 դրամ ա: Գործիս տեղի մոտ ընգերս, ֆիզիկայի պրոֆեսոր Աշոտ Գևորգյանը, կպավ, թե Մեռուժ, արի մի պատմվածք գրի, կարող ա՝ շահում ես:

Ես է՛լ, Աշոտն է՛լ փողի հավերժական դիֆիցիտ ունենք ու պարտքի էլ՝ առատություն (ախր ո՞ք մի հայ նորմալ մտավորականը չունի սրանք), ու էտ դժբախտ 200 000ը գոնե էտ դիֆիցիտի մի ծակը կփակեր: Աշոտի հետ ախպոր պես ենք, ու ինքը շատ էր ուզում, որ գոնե մի քանի կոպեկ փող ընգնի ձեռս: Ու Աշոտն ասեց.

– Ախր քու համար ի՞նչ ա մի հատ էրկու էջանոց պատմվածք գրելը, մի էրկու ժամում կգրես: Գրի, խի՞ չես գրում: Կարող ա՝ շահո՛ւմ ես:

Ես ասի.

– Աշոտ ջան, Հայաստանի մրցույթների օրենքը լավ չգիդես: Էդ օրենքն ըսե՛նց ա: Մեր մրցույթներին հա է՛լ ծանոթիդ ծանոթն ա շահում: Դու ի՛նքդ, երբե՛ք:

Աշոտն ընձնից էղած-չեղածը մի 8 տարի ա փոքր (ես հմի 65 եմ), բայց հլը ռոմանտիկ ա, ու հավատում ա, որ մրցանակ տվողները գոնե մի քիչ ազնիվ ու ճաշակով են: Սրա համար էլ կպավ յախիցս ու համոզեց, որ գրեմ էտ էրկու էջը: Երեվի ես է՛լ եմ հլը ահագին ռոմանտիկ ու հետն էլ՝ միամիտ, որտեվ նստա ու գրի, դաժե էրկու պատմվածք, ու իհարկե, մի շան պոչ է՛լ չշահի:

Հետո էտ էրկու էջը հա՛ ավելացրի ու դգմգի, մինչեվ դառավ էս 12 էջը, ու էլ չփոխվեց: Էսի, սկզբի էրկու էջանոցն էլ հաշված, 22րդ վարյանտն ա:

(Հետո, էս տարվա գարնանը, էսի ուղարկեցի մի փոքր մրցույթի (SMIL կազմակերպությանը), ու էս ըտտե մրցանակ շահեց, չնայած իրանց թեմատիկային չէր էլ բռնում: Ես, իհարկե, իրանց շատ-շատ եմ շնորհակալ: Հետո էլ էսի ուղարկեցի Orange գրքի մրցանակ 2012-ին, ու էսի դաժե եռյակի մեջ չընգավ):

Առհասարակ, ես դժվար եմ գրում, գրածս էլ էնքա՛ն եմ մշակում, մինչեվ (գոնե ի՛մ կարծիքով) էլ մշակելու տեղ չմնա: Բայց երբ մեկն ընձի ջիջիլ ա քցում (պրինցիպի ա քցում – հմի էսի հայերեն ո՞նց ասեմ, որ սրա պես ճիշտ ու դիպուկ ըլնի) կարո՛ւմ եմ գրեմ, ու լա՛վ եմ գրում: Ըտենց վախտերը ոնց որ ընձի մի խնդիր տված ըլնեն, ու ես է՛լ էտ խնդիրը պտի ա՛նպայման լուծեմ, թե չէ՝ ամոթ կըլնի:

Ընենց որ, Աշոտն ապրի, որտեվ որ ինքը չըլներ, էս պատմվածքս չէր ըլնի:

Իմիջիայլոց, սրանից առաջ ես համարյա հա է՛լ մենակ ոտանավոր եմ գրե ու թարգմանե (բացի մի էրկու էրեք պատմվածքն ու մանկական արձակը, ու մեկ էլ արձակ եմ թարգմանե, 1997 թվից տունս համարյա մենակ թարգմանությունով եմ պահում, որտեվ աշխատավարձս կոմունալ ծախսերին հագիվ ա հերիքում: Հայաստանն էսօր շա՛տ տխուր երկիր ա, չէ՞):

Ընենց որ, էսի իմ լրիվ մշակած առաջի գեղարվեստական պատմվածքն ա, չնայած պատմվածքի լիքը ֆաբուլա եմ հավքե, որ մի օր, երբ ժամանակ ունենամ, հանգիստ նստեմ ու դրանք գրեմ: Տենանք, կուեննա՞մ, թե՞ չէ՞:

Երբ 1991 թվին նորնոր սկսեցի էս, էտ, էն ածականների գործածությունը, բանաստեղծ ներսիկ Աթաբեկյանն ասեց, թե «նուրբ բաները՝ օրինակ, Եսենինի կամ Բայրոնի չքնաղ ոտանավորները, խոսակցական լեզվով թարգմանելն անհնար կըլնի: Ես 2008 թվին տպեցի իմ Թարգմանելու արվեստը գիրքը, ինչով ապացուցեցի, որ Էրեվանի բարբառով սարքած իմ գրական ոճով ամեն տեսակ ոտանավորն էլ ուղղակի հրաշալի ա թարգմանվում:

Էս տարի էլ տպեցի իմ «Ընձառյուծն ազատ, նրբագեղ ու ճապուկ» գիրքը, ինչի մեջ դրել եմ համ էլ իմ կարեվոր ոտանավորները:

Էս պատմվածքը համ էլ գրել եմ, որ կարդացողը տենա, որ մեր Էրեվանի էտ արհամարհած «ժարգոնով՝ արձակն է՛լ ա հոյակապ գրվում: Էսքան վստահ եմ ասում էսի, որտեվ արդեն գոնե մի 100 լուրջ գրագետ ա կարդացե էս պատմվածքը (ինտեռնետի մեկ-երկու կայքում էլ կա կամ կար էսի), ու իրանց կարծիքը հույժ գովասանական ա:

Մի քանի բան ասեմ էս պատմվածքի ու գրքի բառապաշարի մասին: Գրաբարյան շրջանում ասում էին՝ «այս+ինքն», բայց սրա վերջի «ն»-ն հողի իմաստ չունեի, որտեվ գրաբարն առհասարակ «ը» ու «ն» որոշյալ հողերը չունեի, ոնց որ էսօրվա ռուսերենը ոչ մի հող չունի: Էսօր էս հողերը կան մեր երեվի սա՛ղ բարբառների մեջը, ու գիր ու գրականության հետ գլուխ չունեցող հայն ասում ա՝ «այսինքս» կամ «այսինքը», այսինքը՝ «այս+ինքը», բնագորով «մտածելով» (կամ «զգալով»), որ սաղ անունների պես է՝ «ս բառն էլ կարա ունենա սաղ դեմքերի ստացական հողերը՝ «այսինքս, այսինքդ, այսինքը(ն)»:

Ուրեմը, թե համաձայն ենք ԼԳՕ-ին (տես իմ «Կոմիտասի և Աբեղյանի անձնական ու մեր ընդհանուր ողբերգությունը» գիրքը, «Լեզվի Գլխավոր Օրենքը» վերնագրի տակ) պտի համարենք, որ թե՛ «այսինքը» ձեվը, թե՛ «այսինքն» ձեվը թույլատրելի են, բայց երկրորդը՝ մենակ ու մենակ բաղաձայնից առաջ, եթե էս բառի ու բաղաձայնի արանքը հնարավոր ա, որ դադար չըլնի:

Բացարձակ նույն բանը ճիշտ ա «ուրեմը», ու «մանրամասը» ու մնացած էս տեսակ բառերի համար:

«Որովհետեվ» բառի տեղը գրում եմ սրա ահավոր գործածական «որտեվ» բառը, բայց թե կարիք զգացի, «որովհետեվ»-ն է՛լ կգրեմ: Ո՞վ ա ապացուցե, թե սրա իրավունքը չունեմ: Տերմինաբանական կոմիտե՞ն: Էդ կոմիտեն, թե գիտելիքի գոնե մի փշուր ունի, թո պատասխան տա իմ էս ասածս գրքի «ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑ» վերնագրի հարցերին ու իմ արդեն ասածս գրքերիս մեջի մնացած հարցերին: Օրինակ, թո ասի, թե էՏ Ո՞ՆՑ Ա, ՈՐ ՄԵՆՔ ՆՈՒՅՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՐ ԷՐԿՈՒ ԻՐԱՐ ՀԱԿԱՍՈՂ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ, ՈՒ ԴՐԱՆՔ ԷՐԿՈՒՍՆ ԷԼ ԾԻՇՏ ԵՆ:

Իմիջիայլոց, «ճամփա» բառն առաջացել ա պարսկերենից փոխ առած «ճանապարհ» բառն արագ-արագ ասելու պատճառով, ու «ճամփա»-ն թույլատրելի ա: Հմի, չեմ հասկանում, թե նույն ձեվով «ճանապարհ»-ից առաջացած «որտեվ»-ը խի՞ չի կարելի:

Ես ու քուրըս մի ախպեր ունեինք, անունը Վյաչեսլավ, բայց մենք է՛լ, մնացածներն է՛լ, իրան Սլավիկ կամ Սլավ էինք ասում:

Ասում եմ՝ ես ու քուրըս, որտե՛վ հերըս Սլավի մեռնելուց հետո երե՛վի չդիմացավ ու երե՛վի հենց դարդից հիվանդացավ պարկինսոնով, ու ահավոր տանջվելով ութը տարի հետո մեռավ, բայց մերըս ավելի ուժեղ էր, ու չնայած անընդհատ լաց էր ըլնում, ապրեց մինչե՛վ ութանասունհրեք տարեկանը, ու նոր մեռավ:

Սլավը պսակված չէր ու 1981 թվին եռսունմեկ տարեկան էր ու թափով տղամարդ էր, ուժեղ ու ճարպիկ, ու վախ էլ համարյա չունեի ու լավ սպորտսմեն էր ու շատ լավ էլ լող էր տալի, ուզում ա՛ ծով ըլնեի, ուզում ա՛ օվկիանոս, ու հետն էլ համալսարանի ֆիզիկան էր ավարտե ու Աշտարակի ինստիտուտում էր աշխատում, ու լավ ռուսերեն ու անգլերեն գիդեր, որ ինքը մենակ էր սովորե, որտե՛վ հայկական կրթություն ունեի, ու ընտիր էլ երաժշտություն գիդեր, հա՛մ ժողովրդական, հա՛մ սիմֆոնիկ, չնայած ոչ մի կանսերվատորյա չէր ավարտե, ու ո՛չ նոտա գիդեր, ոչ է՛լ գործիք-մործիք էր կարում նվագի, որտե՛վ գյուղո՛ւմ էր ծնվե ու մեծացե:

Ու շատ լավ էր երգում ու ձենն էլ Կոմիտասի ձենին շա՛տ էր նման, չնայած Չեքիջյանի խոռում բաս է՛լ էր երգում, ու մենակ հայերեն հին երգերն էր երգում, բայց որ տեղը գար, դաժե ռաբիզ էր երգում:

Սլավը է՛ն մարդկանցից էր, ով ուրիշներին ճամփա ա ցույց տալի, ով նո՛ր բան ա կարում անի ու որ վախտը գալիս ա, անո՛ւմ ա: Էդ ձե՛վ մարդը մենակ մի շնորք չի, որ ունենում ա, շատ շնորք ա ունենում: Ու էտ սաղ շնորքներն էլ կարում ա տեղ հասցնի ու դառնա դրանց վարպետը, է՛ն տեսակ վարպետը, ում որ մարդկանց մեծ մասն ասում ա հանճարեղ:

Բայց երե՛վի բնության օրենք ա, որ էտ տեսակ մարդիկ հա է՛լ մի ուրիշ գործ անեն, փոխանակ անեն հենց է՛ն գործը ինչը որ իրանց ամենաշատն ա դուր գալի, ու ինչ համար որ իրանք ծնվել են, ու երե՛վի հենց էսի՛ էր ուզում Սլավն ասի ընձի, երբ մի անգամ ասեց.

– Գիդե՛ս, ողբերգությունը ի՛նչն ա: Ողբերգությունն էնի՛ ա, որ կարաս տասը երգ երգես, ու էտ տասն էլ կարաս շա՛տ լավ երգես, ու չգիդես, թե դրանցից ո՛ր մեկը երգես:

Ու Սլավը կարում էր ամեն ինչի էլ կարեվորը վռագ տենա, ու ինչ էլ որ անեի, լա՛վ էր անում, ու սիմֆոնիկ երաժշտությունից էլ մոտ մի 600 գիգանտ պլաստիկա ունեի հավաքած, ու մի 100 հատ էլ ջագ ու պոպ երաժշտության պլաստիկա, ու սրանք սաղ էլ էնքան էր լսե, որ անգիր էր արե, ու որ Էրեվանում կարեվոր համերգ էր ըլնում, սիմֆոնիկ՝ թե ուրիշ, Սլավն ա՛նպայման էր էթում, ու հլը ընգերներին էլ համոզում ու հետն էր տանում, ու պատահում էր, որ ընգերնե՛րն էին իրան տանում, որ հետո Սլավն իրանց ասի, թե դրանք լավ են նվագում, թե չէ:

Ու Սլավն էտ պլաստիկեքն առավոտից իրիկուն դնում էր ու լսում, ու երբ մաման ասում էր, Սլավ ջան, մի քիչ ցածրացրու, ախր գլուխս արդեն պայթում ա, Սլավը խնդալով ասում էր, մամ ջան, լսի՛, որ էս կլասիկ երաժշտությունն է՛լ լավ իմանաս, ու քու էտ աշղական ու ռաբիզ երգերն ու մուղամը լսելը թարգես, ու չէր ցածրացնում ու ոչ էլ անջատում էր, ու մաման էլ ստիպված ձեն չէր հանում, ու ես էլ ինչքան որ դասական

երաժշտություն գիղեմ, Սլավին եմ պարտական, որտե՛վ ստիպում էր, որ լսեմ, ու ջղայնանում էր, երբ ասում էի, թե սըլուխից թույլ եմ, ու ասում էր, որ ուշադիր լսես՝ կհասկանաս ու կհիշես, ու ես էլ ստիպված լսում էի:

Ու հիշում եմ, որ օրինակ Բրամսի մի սիմֆոնիան, որ նոր էր առե, ու ինքն էլ հլը չէր լսե, հինգը օր անընդհատ դնում էր ու լսում, ու մենք էլ էինք ստիպված լսում, որտե՛վ հո չէ՞ինք թողի ու տնից էթա:

Ու երբ իմ տղա Վահանը դառավ չեմ հիշում էրկու թե իրեք տարեկան, Սլավը գնաց ու լիքը մանկական պլաստիկ առավ, Շայինսկու երգերը, Բրեմենսկի մուզիկանտները, ու լիքը մանկական հեքիաթ բան, կարծեմ մեկի հեղինակը ինչ-որ Կոզլովսկայա էր (հմի մոռացել եմ, պլաստիկեն էլ չեմ քթնում, որ ստուգեմ), որ մեջը ընտիր երգեր էլ ուներ, որ իմ տղա Վահանը լսի ու իրա ականջը վարժվի երաժշտությանը, որ մեծանա ու կարգին երաժշտություն սիրի, ու երաժշտությունից անգրագետ չմնա:

Ու երեվի իրա ընգեր Վովան էր, որ մի անգամ պատմեց, թե ոնց են նստե կանսերվատորյա ավարտած իրանց տարիքի ջահելների հետ, ու էս կանսերվատորյային ջահելներն սիմֆոնաներից են խոսացե, մեկ էլ Սլավն ա խառնվե ու սկսել ա Բեթհովենից, Մալերից, Բրամսից բանից խոսալը, ու էս կանսերվատորյայի ջահելները սուսուփուս ձենները կդրել են ու մինչե՛վ Սլավի խոսալու վերջը, ուշադիր լսել են իրան:

– Արա՛,– ասեց Վովան, տենայիր՝ Սլավը ոնց էր սիմֆոնիա-միմֆոնիաները անալիզ անում, ո՛նց էր դրանցից կտոր-մտոր շվըցնում ու բացատրում, ո՛նց էր հա հարցնում. «Բա ջութակի կամ ֆլեյտայի կամ էլ եսիմ ինչի էս պարտիան հիշո՞ւմ ես՝, ու շվըցնելով հիշըցնում էր, կամ էլ ասում էր. «Հիշո՞ւմ ես, որ այ էս ինչ տեղը գլխավոր թեման փոխվում ա ու հետն էլ մի ուրիշ փոքր թեմա ա սկսվում»: Տո էնքան բան ասեց, որ դրանք իրանց կյանքում կանսերվատորյայում ըտենց բաներ չէին լսե: Հո՛ չէին էշըցե, որ մի հատ ֆիզիկ կարա ըտենց սիմֆոնիկ երաժշտություն իմանա:

Ժակ Բռելը որ էկել էր Էրեվան, 70-չգիղեմ ո՞ր թիվն էր, Սլավն արդեն մի տասը տարի իրա բալեշիկն էր, գնաց իրա համերգին, հետ էկավ ահավոր մանթռած:

– Զալը համարյա մարդ չկար,– ասեց Սլավը:– Երգում պրծնում էր, համարյա ռակցիա չէին տալի, ես ուժեղ ծափ էի տալի, նոր իրանք էլ էին ծափ տալի: Ահավոր ամոթ էր: Հմի Բռելը ի՞նչ կմտածի մեր էս ժողովրդի մասին: Թողաս, մենակ գլուխ գովան, թե երաժշտական ու կուլտուրական ազգ են:

Սլավին չճանաչողը կյանքում չէր իմանա, որ ինքն էտքան շնորքով ա ու էտքան բան գիղի, որտե՛վ ինքը հեչ գլուխը չէր գովում, ու ում հետ էլ խոսար, էտ մարդուն հետաքրքիր բաներից էր խոսում, օրինակ, որ Սեվաստապոլյան քուչի տղերքի հետ ուզում կայներ, Անդոյի, Արշոյի, Մարգարի, Ապատի կամ մյուսների հետ, կարար իրանց հետ ժամերով խոսար, բայց իրա՛նց թեմաներից, ու տղեքը իրան հարազատի պես էին ընդունում, որտե՛վ իրար հետ էին մեծացե, ու մոռանում էին, որ Սլավը համալսարան բան ա ավարտե, ու որ հես ա, ուր որ ա, թեկնածու ա դառնալու, ու իրան շատ էին հարգում:

Ու նույն ձե՛վ էլ Սլավի գյուղի ընգերներն էին, Գնելը, Նիկոլը, Տերտրանց Ռաֆը, որտե՛վ որ Սլավը գյուղ էթար, իրանց հետ համ գյուղի գործերից էր անելու, ջուր, փոր, բետոն անելն ու պատ շարելը, համ էլ իրանց հետ նստելու էր ուտեր խմեր քեֆ աներ, ու քեֆ անելուց էլ թամադան անպայման ինքն էր, ու շատ լավ էլ թամադա էր, որտե՛վ շատ

բարի էր ու շատ լավ էլ խոսում էր ու հետն էլ անընդհատ երգում էր է՛ն երգերը, որ հայերի իսկական երգերն են, բայց հմի սխալ-սխալ ասում են, թե Կոմիտասի երգերն են:

Ու մի անգամ, երբ տղեքով Գնելենց տունը քեֆ են անում, Գնելը պլաստիկա բան ա դնում, ինչքան հիշում եմ՝ ռաբիզ ու մուղամ, ու Սլավի քեֆն էլ լավ ա ըլում, ու Գնելն ընձի հետո պատմեց, որ Սլավը ջղայնացավ, որ ըտենց զիբիլ բաներ են լսում ու իսկական հայերեն երգերը չեն լսում, ու հելավ էտ սաղ պլաստիկաները հավաքեց ու դուս եկավ սարի ծերը, որտեղ Գնելենց տունը հենց սարի քյալին էր, ու էտ սաղ պլաստիկաները օդի մեջ ֆռըցնելով հերթով շարտեց ձորը, ու ես հարցրի Գնելին, թե խի՞ թողիր, ու Գնելն էլ ասեց, խի՞ Սլավին կարա՞ս բան ասես:

Սլավը երեվի թերություն էլ ուներ, բայց հմի էտ թերությունները աչքիս չեն էրեվում, մենակ գիդեմ, որ Սովետի կարգերին երեվի էնքան էլ հարմարված չէր, որտեղ մի անգամ, երբ տունը գազ էի քաշե, ասի Սլավ ջան, արի մի բան էլ դո՛ւ արա, գնա պաժառնիկից մի թուղթ հանի, որ յանի էկե նայել են ու քաշելու իրավունքը ունենք, ու ինքն էլ ասեց, բա որ չեն էկե տեսե, էտ թուղթը ո՞նց կտան, ու ես էլ ասի, կհանես մի հինգ ռուբլի փող կտաս իրան, կտա, ու ինքն էլ գնաց ու հետ էկավ ու ասեց, թե էտ թուղթը չտվին, ես էլ ասի, փողը տվի՞ր, ու ինքն էլ ասեց, թե տվի, բայց չտվին, բայց ես չհավատացի, որ տվել ա, որտեղ որ տված ըլեր, թուղթը կտային, պոստը ամանչել էր ու չէր տվե, չնայած ինքը հեչ էլ վախկոտ չէր, որտեղ քյորփա ու ջահել վախտերը լիքը կռիվ-մռիվ էինք արե, ու ինքը մի գրամ էլ չէր վախեցե, բայց էտ ձեվ տեղերը ամանչում էր:

Ու հաստատ գիդեմ, որ Սլավի խասյաթն ընենց էր, որ թե է՛ն վախտ չմեռներ, մեկ ա, Ղարաբաղի կռվի վախտը կէթար ու կկռվեր, ու կամանդիր էլ կըլներ, բայց էլի կմեռներ, որտեղ առաջի շարքը կըլներ, կամ էլ իրան, մեկ ա, էլի՛ կխփեին:

Մի խոսքով՝ կարող ա՛ կարդացողը չհավատա, բայց ինչ որ պատմում եմ, լրի՛վ ա ճիշտ, ու ոչ մի բան չեմ հնարում, որտեղ պետք էլ չի, որ հնարեմ, որտեղ հնարած բաները սրան չեն հասնի, որտեղ էսի հենց կյանքն ա, ու կյանքից լավ՝ ո՛չ մեկը չի կարա հնարի:

1981 թվին, երբ Սլավը Ճլեյի Քարից գլխի վրա թռել էր գետն ու ողնաշարը ջարդել էր, որտեղ մի էրկու օր առաջ անձրեվ էր էկե, ու գետը բերե ու ավազ էր լցրե Ճլեյենց գյուղ, որ առաջ էրկու մետր խորն էր, բայց էտ օրը ջուրը մի մետր էլ խորը չէր եղե, ուրեմը 1981 թվին իմ տղա Վահանը հինգը տարեկան էր, ու Վահանն ահավոր շատ էր սիրում Սլավին, ու Սլավն էլ Վահանին էր շատ-շատ սիրում, ու հա՛ հետը տեղ-մեղ էր տանում, ու մի անգամ Սլավը Մասկվայից 20-30 խաղալիք սամալյոտ էր առե բերե, չնայած Սլավի աշխատավարձը հեչ բան էր:

Բայց Սլավը չէր իմացե, որ էտ սամալյոտները հավաքովի են, ու որ պտի դրանք կլեյով կպցնես ու հավաքես, ու Սլավը չալարեց ու մի էրկու շաբաթ գործից հետո նստավ ու էտ 20-30 սամալյոտը հերթով հավաքեց, ու իմ տղա Վահանն էլ դրանք հերթով ջարդեց, ու հմի էտ սամալյոտներից մենակ մի՛ հատ ա մնացե, էն էլ չգիդեմ ո՛րդե ա հմի:

Ու մի անգամ էլ Սլավը իմ չորս տարեկան Վահանին հետը տարել էր իրա ընգերոջ՝ Վովայի դաչան, որ Վովայի դաչայի քարերը մաքրեն, որ Վահանն էլ ընդե խաղա, որտեղ Վովան, պարզ բան ա, որ ինքը չի կարում բանվորություն անի, որտեղ փոքր

վախտը տրամվայի տակ էր ընգե, ու պտի Վովայի ընգերները օգնեին, որ իրա դաշան խելքի բերեին:

Ու Վովան ընձի պատմեց, որ երբ Սլավն ու իրա ընգերները մի վեցը-յոթը հոգով մի մեծ սեղանի շափ քար են գլորում, որ տանեն դաշայից հանեն էն յան, իմ տղա Վահանը գալի պառկում ա քարի ճամփին ու կապրիզ ա անում:

Ու երբ Սլավն ասում ա,– վեր կաց,– Վահանը չի վեր կենում, ու իմ ախպեր Սլավին չի լում ու Սլավը չի ջղայնանում էրեխու վրա, ու ասում ա, որ պտի քյորփեն ըտենց էլ պառկած մնա իրա տեղը, ու պտի իրանք էտ եքյա քարի ճամփեն փոխեն ու մի եքյա կռուզ տան,– որտե՛վ,– ասում ա Սլավը,– էտ քյորփեն ո՞վ ա, որ իրա կապրիզով իմ կապրիզին հաղթի:

Ու տղեքին ստիպում ա, որ էտ քարը եքյա կռուզով տանեն դուս հանեն, ու էրեխի վրա հեչ չի խոսում ու չի ջղայնանում, որտե՛վ Սլավը Վահանին շա՛տ էր սիրում:

Ու երբ Վահանը էրկու թե իրեք տարեկան էր, ես մի անգամ հարցրի իրան,– որ մեծանաս ի՞նչ կդառնաս,– ու Վահանն ասեց,– կդառնամ մարդ,– բայց իհարկե ինքը չէր հասկանում, որ մեծերը մարդ ասելով՝ ուրի՛շ բան են հասկանում: Ինքն ուղղակի ուզում էր ասի, որ տղամարդ ա դառնալու: Բայց երբ Վահանը դառավ չորս թե հինգը տարեկան, ու ես մի անգամ էլ է՛դ վախտ հարցրի իրան,– որ մեծանաս՝ ի՞նչ կդառնաս,– Վահանն ասեց,– որ մեծանամ, կդառնամ էրկու Սլավիկ,– որտե՛վ Վահանն էլ Սլավի՛ն էր շատ սիրում:

Սլավի մեռնլուց մի տասնըհինգ օր առաջ իմ տղա Վահանի ծնունդն էր, որտե՛վ օգոստոսի քսանըհինգին Վահանս դառնում էր հինգը տարեկան, ու Վահանի ծնունդից մի էրկու օր առաջ Սլավն ընձի հարցրեց, թե Վահանի ծնունդը անելո՞ւ եմ, թե՞ չէ, ու ես էլ ասի, որ չեմ անելու, որտե՛վ փող չկա, ու ասի, որ նունեն մենակ մի տորթ ա թխելու ու մենակ իրա ընգերուհուն ա կանչելու, ու ուրիշ էլ ոչ մի մարդ չի ըլնելու:

Ու ես գիդեմ, որ Սլավն էլ փող չուներ, որտե՛վ հմիկվա պես՝ էն վախտ է՛լ սովորական բան էր, որ մոտներս փող չըլներ, բայց երբ նունեն Վահանիս ծնունդի օրը սեղանը քցեց, Սլավը հելավ ու էրկու հատ «Բոյիտ մեռնեմ՝ արաղ բերեց, որ էն վախտ նորություն էր, որտե՛վ Սովետի վախտ դրանից առաջ Հայաստանում մենակ կե՛ս լիտրանոց արաղ կար:

Ու էտ օրը հինգը հոգով սեղան նստանք, ու Սլավը Բարով եկար, սիրուն կռունկը երգեց, որ դրանից առաջ ես ոչ մի անգամ չէի լսե, ու դուրըս շատ էկավ, ու էտ օրը խնդրեցի ու Սլավը մի քանի անգամ երգեց էտի, որտե՛վ ուզում էի սովորեմ, ու դրա մյուս օրն է՛լ էի անընդհատ խնդրում, որ էլի երգի ու եղանակն ընձի հիշըցնի, որտե՛վ ես սըլուխից շատ թուլ եմ, ու Սլավն էլ խնդաց վրես ու շվըցնելով մի անգամ էլ հիշըցըրեց ու ասեց, որ էլ չի հիշըցնի:

Ու ես հետո իմացա, որ Սլավը Հախվերդյան Ռուբոյի հետ նստում էր ու էտ երգը ու ուրիշ երգեր էլ հետը՝ երգում էր ու Ռուբոյին ասում էր, թե Ռուբոն ո՛նց երգի, որ լավ ըլնի:

Ու ես չգիդեմ՝ Հախվերդյան Ռուբոն էտի հիշո՞ւմ ա, կամ էլ կհաստատի, թե չէ, բայց մի անգամ Ռուբոյի կինը՝ Նանան, Ռուբոյին ասեց,– ախր հիշո՞ւմ ես, Սլավը քու համար ինչեր ա արե,– ու ինչքան հիշում եմ, Ռուբոն ձե՛ն չհանեց, բայց էտի կարեվոր չի, որտե՛վ Սլավը մեռավ, ու որտե՛վ Վահանիս ծնունդի օրը Սլավը Բարով եկար, սիրուն կռունկը եսիմ քանի՛ անգամ երգեց, որտե՛վ Սլավը Վահանիս շատ էր սիրում, ու Վահանի՛ս համար էր երգում, որ Վահանի ականջը սովորի հայերեն երգին, թե չէ ուրիշ վախտ, որ

խնդրեի էլ, ուրի՛շ երգ կերգեր, ու նույն երգը էտքան շատ չէր երգի, ու հմի էտ երգը ես էլ եմ երգում, ինչքան կարում եմ:

Ու երբ Սլավը պառկել էր Եղեգնաձորի հիվանդանոցն ու կամաց-կամաց մեռնում էր, որտե՛վ մենակ թե՛վերն էր կարում վեր ու վար անի ու մնացածը լրի՛վ կաթված էր, ու չէր կարում շարժի, ու ներ՛վերն էլ չէյին աշխատում, ու չէր կարում լավ չի՛շիկ անի, ու շեռի մեջի ազոտը քիչ-քիչ լցվում էր արունն ու թունավորում էր իրան, մենք իմ տղա Վահանին թողել էինք գյուղը, ու Վահանը չգիդեր, որ Սլավը մեռնում ա, ու ըտենց էլ չիմացավ, որտե՛վ իրան ասել էինք, որ Սլավը գնացել ա Լենինգրադ, ու շուտ չի գա:

Ու ես է՛լ չգիդեի, որ Սլավը մեռնում ա, ավելի ճիշտ, ուշ գլխի ընգա, որտե՛վ Էրեվանից բերած ապերացյա անող նեյրոխիրուրզն ընձի ասեց, որ ամեն ինչ լավ կըլնի, բայց ոչ մի ձե՛վ փող չվեկալեց, ու մեջըս կասկած ընգավ, որ էտի փողը չի վեկալում, որտե՛վ գիդի, որ Սլավը մեռնելու ա, թե չէ խի՞՞ չպտի վեկալեր, բայց էտ կասկածը մոռացա, որտե՛վ մտքիս մեջ հեչ համաձայն չէի, որ Սլավը մեռնի, ու ընձի ձեռ էր տալի, որ մոռանայի, բայց ինչ արինք չարինք, Սլավին չփրկինք, որտե՛վ փրկություն չկար, ու ինչքան էլ սաղ ազգ ու տակո՛վ ու ընգերությունն էլ հետը՝ չարչրվանք, չկարացինք Սլավին փրկենք, որտե՛վ ողնալարը պատռվել էր, ու բժիշկներն ասին, որ ողնալարը չի վերականգնվում, ու համ էլ՝ հմիկվա պես էն վախտ է՛լ կարգին բժշկություն չկար, ու դրա համար էլ մենակ հետո իմացանք, որ Սլավի կատիկն էլ էր ջարդվե, ու սրա համար էր, որ չէր կարում լավ կուլ տար, ու բժիշկներն ասում էին, որ էտի կաթվածից ա, որ դժվար ա կուլ տալի, բայց կատիկն էր ջարդվե, ու մենք մենակ վերջում իմացանք, որ կատիկն ա ջարդվե, որ դժվար ա կուլ տալի:

Ու Սլավը պառկել էր ընդե, կառավարի վրա, մի 31 տարեկան հսկա տղամարդ ու լրի՛վ տկլոր, որտե՛վ ամառ էր ու շատ էր շոգ, ու մերըս, քուրըս, հորքուրըս, կինըս ու մյուս կնանիքը անընդհատ Սլավի մոտ էին, որտե՛վ իրան էին խնամում ու բանի տեղ չէին դնում, որ Սլավը լրի՛վ տկլոր ա, որտե՛վ էտի հեչ կարե՛վոր չէր, որտե՛վ ամենակարե՛վորը Սլավին փրկելն էր, ու ինքը տկլոր պտի ըլներ, որտե՛վ բացի շոգից Սլավին պտի անընդհատ շուռ տային կողի վրա, որ մեջքը սպիրտով բանով սրբեին, որտե՛վ մի քանի օրվա մեջ իրա մեջքի վրա մի չորսը-հինգը տեղ մի ափի չափ ու հլը ավելի շատ՝ արդեն նեխել էր ու վերք էր դառե, որտե՛վ կաթվածից ներ՛վերը չէին աշխատում, ու արունը համարյա չէր խաղում, որ չթողար, որ մաշկի տակի հյուսվածքները նեխեն:

Սլավը գիդեր, որ մեռնում ա, բայց ձե՛ն չէր հանում ու ոչ մի անգամ չբողոքեց ու չնվնվաց, ու երե՛վի հույսը դրել էր ի՛մ վրա, որտե՛վ ընձի շատ էր հավատում, ու գիդեր, թե ձեռիցս շատ-շատ բան ա գալի, կամ էլ ուղղակի ուզո՛ւմ էր, որ ըտենց ըլնի, ու չէր ուզում հավատա, որ իսկականից մեռնում ա, բայց ինչ արի չարի, բան չեղավ, ու ես ու հորքորջըս տղա Ստյոպը տասիրեք օր համարյա չքնանք, որտե՛վ Սլավը ընգնելուց հետո տասիրեք օր ապրեց ու օգոստոսի եռսունմեկին մեռավ, ու մեր ոտների ուռածը Սլավի մեռնելուց էրկու ամիս հետո նոր անցավ, բայց Սլավը մեռավ:

Ու երբ մի անգամ հերըս ու մերըս Սլավի կառավարի կողը կայնած չդիմացան ու լաց էղան, Սլավը ջղայնացավ ու ասեց,– ի՞նչ էք լաց ըլում, պադումայեշ, մեռնում եմ՝ մեռնե՛մ: Որ մեռնեմ, չքոնեք վրես թանգանոց քար քաշեք,– ասեց, որտե՛վ հա՛մ հարուստ չէինք, համ է՛լ Սլավը ստից-մտից բաներին չէր հավատում, ու մի կաթիլ էլ քաղքենություն չուներ:

– Կէթաք,– ասեց Սլավը,– ընդից, որդուց որ ընգել եմ, մի քար կվեկալեք կբերեք կոնեք գերեզմանիս, ու վրեն էլ ոչ մի բան չգրեք:

Բայց հաստատ գիդեմ, որ իրա հույսը ե՛ս էի, ու որ ինքը չէր ուզում մեռնել, որտե՛վ որ մի անգամ գնացել էի, որ մեր Մեխակենց տունը մի երկու ժամ քնեմ հանգստանամ, որտե՛վ մի հինգ վեց օր չէի համարյա քնե, մեկ էլ Սլավը խաբար արեց, որ էթամ հասնեմ, ու երբ էկա, Սլավն ասեց,– ո՞ր էիր,– ու ես էլ ասի,– գնացել էի, որ մի երկու ժամ հանգստանամ, որտե՛վ հոգնած էի,– ու Սլավն էլ ասեց,– բա ես հոգնած չե՞մ,– ու ես հասկացա, որ Սլավը հույսն իմ վրա ա դրե, ու ասի,– էլ ոչ մի տեղ չեմ էթա քու մոտից,– ու էլ ոչ մի տեղ չգնացի, բայց մեկ ա՛ ես է՛լ բան չկարացի անեմ, ու Սլավը մեռավ:

Ու մեկ-մեկ, շատ հազվագյուտ, երբ մեզի ազոտը շատ էր լցվում արունը, Սլավը մի ձե՛վ զառանցում էր, շատ քիչ ու տարօրինակ ձե՛վով, մի տեսակ կապակցված, ոնց որ չզառանցեր, բայց զառանցում էր, ու մի օր էլ այ էս ձե՛վ զառանցելուց՝ նայեց պատալուկից կախ վինտիլատրին, ու ասեց, որ ռոբոտների աստվածը հե՛ն ա, նստելա այ ընդե ու ասեց որ դրան քչեմ ըստուց, ու ես էլ ասի, որ ընդե ոչ մեկը չկա, բայց Սլավը ասում էր, որ կա, ու հետս ընենց էր խոսում, ոնց որ հեչ չզառանցեր, բայց զառանցում էր:

Ես հասկացա, թե Սլավն ի՛նչ ա ասում, որտե՛վ երկուսս էլ կարդացել էինք Այզեկ Ազիմովի ռոբոտների պատմությունը, երբ անգլերեն էինք սովորում, ու ընդե մի պատմվածք կար, ու դրա մեջ Լուսնի մոտի մի ըստանցյալի մեջ մի քանի ռոբոտ կար, ու դրանց էլ մի մարդ էր աշխատացնում, ու էտ ռոբոտները սկզբից հենց գիդեին, թե է՛ս մարդն ա իրանց տերը, բայց հետո էս ռոբոտները բունտ են անում, ու ասում են էս մարդուն, որ չի կարա պատահի, որ ի՛նքն ըլնի իրանց տերը, որտե՛վ ինքը շատ անկատար ա, դաժե իրանցի՛ց ա անկատար, որտե՛վ ինքը պտի օրը մի քանի անգամ բիոլոգիական կերակուր ընդունի, ու դրա մե՛ծ մասն էլ չի կարում մարսի, ու էլի դուս ա թափում, իսկ իրանք էներգիայով են սնվում, ու էտ էներգիան հարուր տոկոս են մարսում, իսկ էտ էներգիան էլ Գլխավոր Ռոբոտն ա արե՛վից վեկալում ու տալիս ա իրան, ուրեմը, էտի, հենց էտ Գլխավոր Ռոբոտն ա իրանց աստվածը, ու էս ռոբոտներն էս մարդուն կապում են, որ հանգարծ պատահական էտ ստանցիալի աշխատանքին չխանգարի, ու Սլավը ոչ մի ձե՛վ չէր համոզվում, որ ըստե ոչ մի Գլխավոր Ռոբոտ կամ աստված չկա, ու ստիպված մարդ բան կանչի ու էտ վինտիլատերները հանել տվի, որ նոր հանգստացավ:

Ու մի անգամ խիրուրգ Սերժիկը հարցրեց ընձի, թե Սլավը կյանքում հեչ քֆուր չի՞ տալի: Ես ասի, խի՞ չի տալի, տալիս ա, ոնց որ սաղ տղեքն են տալի, խի ի՞նչ ա էղե որ:

Ու խիրուրգ Սերժիկն ասեց, որ շշմելու բան ա, որ դաժե զառանցելու վախտը քֆուր չի տալի, որտե՛վ ուրիշները տալիս են, ուրեմը ահավոր ուժեղ կանտոռլ ունի:

Բայց մի անգամ Սլավը քֆուր տվեց, չնայած մի՛նչե՛վ հմի էլ չգիդեմ, էտ քֆուր տալու վախտը զառանցո՞ւմ էր, կամ լրիվ է՞ր լուրջ, թե՞ չէ, որտե՛վ Սլավը կյանքում ընձի մի չոռ չէր ասե, ու որտե՛վ գիդեմ, որ Սլավն ընձի՛ էլ էր սիրում, այսինքը՝ կարող ա Վահանի չափ չէր սիրում, բայց սիրում էր, ոնց որ շատ լավ ախպերներն են իրար սիրում:

Ու էտ անգամը, երբ ես ու Սլավը մենակ էինք, Սլավն ընձի ասեց,– բայց դու գյոթվերան ես:– Ես ասի,– խի՞ Սլավ ջան, խի՞ եմ գյոթվերան,– ու ինքն էլ ասեց,– խի՞ չթողիր էն աղջկան առնեմ, խի՞ ասիր, թե ոտերը հաստ են, որ չասեիր, իրան կառնեի, ու էս բանն էլ չէր պատահի:

Ու չնայած գիդեմ, որ կապ չունի, բայց սրտիս ահավոր կպավ, որ Սլավն ընձի ըստնց բան ասեց, որտե՛վ չնայած Սլավն ընձից երկու տարի փոքր էր, բայց մենք կյանքում իրար չոռ ասած չկայինք, ու թե որ ես հանգարծ մի բանը ընենց չանեի, ոնց որ պետք էր,

կինս կասեր, թե Սլավին կասեմ, որտե՛վ գիդեր, որ ես կյանքում մենակ իմ փոքր ախպորիցս եմ ամանչում, ու դաժե հորըս ու մորըս ընենց չեմ լսում, ոնց որ իրան եմ լսում, ու ես հա՛ մտածում եմ, որ Սլավը ճիշտ էր ասում, որ ես չասեի, որ էն աղջկա ոտերը հաստ են, Սլավն իրան կառներ, ու կյանքն ուրիշ ձեվով կեթար, ու Սլավը Ճլեյի Քարից չէր թռնի ու ողնաշարն ու կատիկը չէր ջարդի ու չէր մեռնի, բայց ես ըտենց էլ չիմացա, թե ընձի քրֆելուց զառանցո՞ւմ էր կամ լրիվ էր լո՞ւրջ, թե՞ չէ:

Մեռնելուց Սլավն ահավոր տանջվավ: Ընգնելուց ու ողնաշարը ջարդելուց տասներկու օր հետո գիտակցությունը կորցրեց, ու ըտենց մնաց մեջքի վրա պառկած, լրիվ տկլոր ու աչքերը բաց, բայց աչքերի մեջ էլ ոչ մի բան չկար, ոչ խելք, ոչ միտք, ու հետո էլ շունչը էնքան ծանրացավ, որ թոքերի ձենն էլ էր լսվում:

Հետո էտ ծանր շնչառությունը դառավ խռխռոց, ու ինքը էլ ոչ մի բան չէր հասկանում ու ոչ մի բառ չէր ասում, ու խիրուրգ Սերժիկը Սլավի ձեռները կապեց կառավաթից, որտե՛վ Սլավն իրա թեվերն անընդհատ հելցընում ու իչըցնում էր, որտե՛վ մենակ թեվերն էր կարում շարժի, ու թեվերն անընդհատ հելցընում ու իչըցնում էր, անընդհա՛տ, անընդհա՛տ, անընդհա՛տ, ու չէր էլ զգում, որ ըտենց ա անում, ու ես էսի չեմ ուզում պատմեմ, որտե՛վ երբ էլ որ պատմեմ, լաց եմ ըլնում, բայց հմի գրում եմ, որտե՛վ որ մի քանի տարի անցավ, ու ես սկսա բան-ման գրելը, ինքս ընձի խոսք տվի, որ մի օր էս պատմությունը լրիվ գրելու եմ, ու հմի դրա մենակ շատ քիչ մասն եմ գրում:

Ասում եմ, Սլավն էտ վախտը բան չէր հասկանում կամ զգում, բայց ախր ո՞վ իմանա, կարող ա անձեն զառանցում էր, կարող ա էտ անձեն զառանցանքի մեջ ինչ-որ բաներ էր տենում, թե չէ՝ թեվերը խի՞ էր անընդհատ հելցնում ու իչըցնում: Հետո, մի քանի տարի հետո, ինքս ընձի համոզի, որ Սլավը հաստատ զառանցում էր, ու իրա զառանցանքի մեջը կռվում էր մի ինչ որ ֆանտաստիկ հրեշի հետ, երեվի հենց էն ռոբոտների՝ աստծու հետ, ով որ յանի իրա էտ կաթվածի պաճառն էր, ու երեվի ուզում էր դրան տա սատկացնի, որ առողջանա ու հելնի կայնի ոտի:

Էսի շատ ա հավանական, որտե՛վ երբ հըը շատ ջահել էինք, Սլավը մի օր ասաց, թե ինչ-որ մեկը, չեմ հիշում, թե ով, շունչը պահելով ինքն իրան սպանել ա, ու Սլավը զարմանում էր, թե էտ ինչ ուժեղ կամք ա ունեցե էտ մարդը:

Ու երբ Սլավը հըը ուշքը չէր կորցրե, մի՞ թե էրկու անգամ անգամ շունչը երկար պահեց, որտե՛վ ինքը գիդեր, որ թե ապրի է՛լ, ինվալիդ ա մնալու, իսկ ինքը համաձայն չէր ըտենց ապրելուն, ու ես վռազ հասկացա ու գոռացի վրան, որ ըտենց հիմարություն չանի, որ հույսն իզուր ա կդրում, որ հըը հելնելու ա կայնի, որ պտի ինքն է՛լ պայքարի, որ հելնի կայնի: Սլավը ձեն չհանեց, բայց հետո էլ շունչը չպահեց, բայց երբ ուշը գնաց ու իրա կանտոռը կորցրեց, երեվի էտ վախտ որոշեց, որ պտի կռվի էտ ռոբոտների էտ անտեր աստծու հետ: Սրա՛ համար ա, որ մտածում եմ, որ Սլավը թեվերը բարձրացնելու ու իչըցնելու վախտը էտ աստծու հետն էր կռվում:

Ու երբ Սլավը մեռավ, ու իրան տարանք մեր գյուղը՝ Մալիշկա, ու թաղինք, իմ հինգը տարեկան տղա Վահանը ընդե չէր, ու ինքը չիմացավ, որ Սլավը մեռել ա, որտե՛վ ասել էինք, որ Սլավը գնացել ա Լենինգրադ, ուրեմը դրանից մի քանի շաբաթ հետո մերըս մի անգամ էթում ա գերեզմանները, որ լաց ըլնի, ու իմ հինգը տարեկան տղա Վահանին էլ հետն ա տանում, որտե՛վ չէր կարա իրան տանը մենակ թողար:

Ու երբ մերըս գերեզմանի կողքը նստած ձենով ա լաց ըլնում ու Թումանյանի Մարոյի միջի մոր պես լաց ըլնելով խոսում ա Սլավի հետ, իմ տղա Վահանը շշկռած հարցնում ա

թե,- ա՛յ տատի, խի՞ ես լաց ըլնում,- ու մերըս ասում ա,- ախր Սլավը մեռել ա, ու բերել ենք ըստե թաղել ենք:

Վահանը սկզբից չի հասկանում, բայց երբ հասկանում ա, ասում ա,- ո՞վ ա թաղե:- Ու մերըս ասում ա, որ ինքն ա բերե ու իրա կոտրած ձեռներով թաղել ա ըստե: Ու Վահանըս էլ կատղած ու լաց ըլնելով հասնում ա մօրըս վրա ու կատղած՝ բոքսով անընդհատ խփում ա մօրըս ու գոռում ա,- ո՛նց որ թաղել ես, հենց հմի՛, հենց քո՛ւ ձեռներով էլ հողը քանդի՛ ու Սլավին հանի՛ հողի տակից, որտեվ ես չեմ ուզում, որ Սլավը մեռնի,

դու ի՞նչ ա,

չե՞ս հասկանում,

որ ես չե՛մ ուզում, որ Սլավը մեռնի,

թո չմեռնի՛,

ես ասում եմ՝ թո չմեռնի՛,

չե՛մ ուզում,

չե՛մ ուզում,

չե՛մ ուզում:

Ու շատ ա ծեծում մօրըս ու կպած անընդհատ գոռում ա,- շո՛ւտ արա, Սլավին հենց հմի հանի՛ հողի տակից,- ու երբ տենում ա, որ մերըս հողը չի քանդում, ի՛նքն ա քցվում ու իրա քյորփա ձեռներով հողը շանգռում քչփորում ա, որ քանդի ու Սլավին հանի, ու երբ մերս մի կերպ հանգստացնում ա իրան, ու Վահանըս հասկանում ա, որ էլ վերջ, որ Սլավը էլ արդեն անդարձ ա հողի տակն ու էլ ոչ մի ձեվ հետ չի գա, էրկուսով էլ ահագին լաց են ըլնում, ու հետո մերըս իրան բերում ա տուն:

Ու հմի Վահանը արդեն ի՛նքն ա երեսունմեկ տարեկան, բայց էն օրվանից հետո էս քսանվե՛ցը տարին ո՛չ մի անգամ հլը Սլավի անունը չի տվե ու իրա մասին ո՛չ մի բան չի ասե ու հլը ո՛չ մի բան չի պատմե, որտեվ ո՞վ իմանա, էն վախտը երեվի ահավո՛ր ա նեղացե Սլավից, որ Սլավը մեռել ա, կամ էլ՝ մեզնից, որ Սլավին տարե թաղել ենք հողի տակ ու էլ չենք հանե, եսի՞մ, բայց ո՛չ մի բան, ո՛չ մի խոսք չի ասե ու չի ասում, որտեվ Վահանը սիրո՛ւմ էր Սլավին, ահավո՛ր էր սիրում:

Մենք չգիդեինք, որ Վահանը էտքան շատ ա սիրում Սլավին, բայց Վահանն ահավոր շա՛տ էր սիրում Սլավին, չնայած սիրո ո՛չ մի բանաձեվ էլ չգիդեր, ո՛չ լավը, ո՛չ վատը, ու Սլավն էլ Վահանին էր ահավոր սիրում, բայց հարուր տոկոս գիդեմ, էլի առանց բանաձեվի էր սիրում, որտեվ սիրելը բանաձեվով չի՛ ու բանաձեվ չի՛:

Որտեվ սիրելը համ էլ չարչարանք ա, համ էլ ոնց որ մի ձեվ գո՛րծ ըլնի, բայց շնչելու ու ապրելու պես գործ, է՛ն ձեվ գործ, որ չես կարա շանես, որտեվ բանաձեվով չե՛ն սիրում, ուղղակի սիրում են, ու երբ սիրում են, վռազ իմանում են, որ սիրում են, ու չեն ուզում, որ իրանց սիրածը մեռնի ու ահավոր են վախում, որ հանգարծ իրանց սիրածը չմեռնի կամ չթողի էթա:

Ու երբ որ չեն վախում, որ իրանց սիրածը կմեռնի կամ կթողի կէթա, էտ սերը չի էրեվում, ու կողքից ոչ մեկը չի տենում, որ դրանք իրար սիրում են, ոնց որ արդեն երկար ժամանակ պսակված մարդ ու կնգա սերը չի էրեվում, չնայած որ ջահել վախտը էրեվացել ա:

Սերը բանաձեվ չի ու բանաձեվով չեն սիրում:

Իսկ եթե հանգարծ իրանց սիրածը մեռնում ա,
ո՛չ մի ձեվ չեն հաշտվում դրա հետ ու ասում են,
–չէ՛, չէ՛, թո չմեռնի՛,
–չե՛մ ուզում, որ մեռնի,
–չե՛մ ուզում,–
ճիշտ նույն ձեվ,
ոնց որ իմ տղա Վահանն էր ասում,
–չե՛մ ուզում,
–չե՛մ ուզում,
–չե՛մ ուզում:

Բայց մեծերից շատ շատը հաշտվում ա է՛ն մտքի հետ, որ իրանց սիրած մարդը պտի մեռնի, կամ որ արդեն մեռել ա, ոնց որ ե՛ս հաշտվեցի, երբ որ Սլա՛վն էր մեռնում:

Որտեվ երբ որ Սլավն արդեն հաստատ մեռնում էր, ու արդեն էլ ոչ մի ճար չկար, չգիդեմ ով, երեվի հորքրոջըս մարդը՝ Հովանեսը, ռանիմացյայի բժիշկ կանչեց, ու էտ բժիշկը վեռտալլոտով էկավ ու Սլավի սիրտը սրսկեց, ու Սլավի դոշերն անընդհատ սխմելով ու թողալով՝ սկսեց Սլավին իբր թե կենդանացնել, յանի սիրտն էր մասաժ անում, թե ինչ:

Ես չկարացի նայեմ, ու թողի մի յան գնացի, որտեվ Սլավը մենակ խոխոըցնում էր ու թեվերն էր ցնցում, որտեվ խիրուրգ Սերժիկը Սլավի թեվերը կապել էր կառավարից, ու ես խիրուրգ Սերժիկին հարցրի, հո՞ Սլավը բան չի գգում, ու խիրուրգ Սերժիկն ասեց, որ հաստատ՝ ոչ մի բան չի գգում, ու որ արդեն էլ ոչ մի բան չի օգնի իրան:

Ու հետո խիրուրգ Սերժիկն ասեց, որ էլ չթողամ, որ էտ ռանիմացյայի բժիշկն իզուր տեղը չարչարի Սլավին, որտեվ Սլավը մեկ ա՝ կմեռնի, թո գոնե հանգիստ մեռնի:

Ու ես էլ գնացի ու էտ ռանիմացյայի բժշկին ասի, որ էլ ոչ մի բան չանի, ու երեվի շատ կոպիտ ասի, որտեվ էտ բժիշկը նեղացավ, որտեվ վեռտալլոտով հելե էկել էր, որ յանի օգնի, ու ես էլ չթողի, որ օգնի, որտեվ Սերժիկը ճիշտ էր ասում, էլ արդեն աշխարհում ոչ մի բան չէր օգնի Սլավին:

Ես էտ ռանիմացյայի բժշկին ասի, որ ինքը թողա, որ Սլավը հանգիստ մեռնի, որտեվ արդեն հաշտվել էի, որ Սլավը մեկ ա՝ մեռնելու ա, բայց որ Վահա՛նըս ըլներ, կյանք՛ւմ ըտենց բան չէր ասի, որ սպանեիր էլ, չէր ասի, ու Վահանը կասեր,

–չէ՛, չէ՛, թո չմեռնի՛,
–չե՛մ ուզում, որ մեռնի,
–չե՛մ ուզում,
–թո չմեռնի՛,
–չե՛մ ուզում, որ մեռնի,
–չե՛մ ուզում,
–չե՛մ ուզում, որ մեռնի,
–չե՛մ ուզում,
–չե՛մ ուզում,
–չե՛մ ուզում,
–չե՛մ ուզում,–

ու գոռգոռալով անընդհատ լաց կըլներ ու ձենը ո՛չ մի ձեվ չէր կտրի:

Բայց ես հաշտվաւ ու ռանիմացյալի բժշկին ասի, թող թո Սլավը մեռնի, ու մինչեւ էսօր էլ չգիդեմ, ճիշտ եմ արե, թե չէ, բայց եթե ճիշտ չեմ արե, ուրեմը ե՛ս էլ եմ սպանե Սլավին:

Ուրեմը ճիշտը որ խոսանք, մենակ քյորփա էրեխեքն են կարում իսկականից սիրեն, որտեւ քյորփեքը կյանքո՛ւմ չեն հաշտվում, երբ իրանց սիրած մարդը մեռնում ա:

Ուրեմը, թե որ սիրելու բանաձեւ կա է՛լ, էտի քյորփա էրեխու պես սիրելն ա, որտեւ համարյա սա՛ղ մեծերն էլ վերջը հաշտվում են իրանց սիրածի մեռնելու հետ:

Ու առհասարակ՝ սիրելու ո՛չ մի բանաձեւ էլ չկա, ո՛չ քյորփեքի համար, ոչ է՛լ մեծերի, բայց քյորփեքը, մե՛կ ա, չե՛ն հաշտվում, երբ իրանց սիրածը մեռնում ա, որտեւ երեւի մենակ քյորփե՛քն են կարում իսկականից սիրեն:

Ու քյորփեքը կարում են ուրիշներին ու օտարներին էլ սիրեն, թե որ էտ ուրիշներն էլ քյորփեքի՛ն են սիրում, որտեւ քյորփեքն առանց սիրելու չեն կարա ապրեն, ու քյորփեքի համար հենց սիրե՛լն ա ապրելը, ու քյորփեքն ուրիշներին է՛լ են սիրում, թե որ էտ ուրիշները բարի են, ու սրա համար էլ քյորփեքը սիրում են Ձմեռ Պապուն, որտեւ Ձմեռ Պապին իրանց նվեր ա բերում, ու նվերն էլ բերում ա, որտեւ սիրո՛ւմ ա իրանց, ու թե որ չբերեր, չէին սիրի, որտեւ էտ վախտ Ձմեռ Պապին օտար կըլներ իրանց համար, ոնց որ օտար էր իմ ու Սլավի համար, երբ որ ես ու Սլավը փոքր էինք, որտեւ մեր փոքր վախտը Ձմեռ Պապին ոչ մի անգամ մեզ նվեր չբերեց, որտեւ էն վախտ գյուղերում ոչ մի Ձմեռ Պապի էլ չկար, մանավանդ Պատերազմից հետո, ու ես ու Սլավը ոչ մի Ձմեռ Պապու էլ չէինք հավատում, ու որ հլը շատ փոքր էինք, դաժե չգիդեինք, որ աշխարհում Ձմեռ Պապի կա:

Ու Աշտարակի ինստիտուտի աշխատողների էրեխեքն է՛լ էին սիրում Սլավին, որտեւ նոր տարվա տոնածառին Սլա՛վն էր իրանց Ձմեռ Պապին ու Սլա՛վն էր իրանց նվեր տալի, ու Սլավի մեռնելուց մի քանի ամիս հետո էտ էրեխեքի հեր ու մերերն ու Սլավի ընգերները փող հավքին ու մի էրկու կիլոմետր հեռվից տռութեքով ջուր բերին, ու ինստիտուտի հայաթը, շենքից մի էրկու հարուր մետր հեռու, մի պուպուլակ դրին, ու վրեն էլ Սլավի ձեռագրով գրին՝ Սլավ, որտեւ Սլավն էտ ձեւ էր ստորագրում, ու որտեւ Սլավը համ էլ իրանց ընգերն էր ու իրանց պրոֆկոմն էր, ու համ էլ՝ Իֆիյոպյայի ընտրովի պրեզիդենտն էր, որտեւ աշխատողները իրանց ինստիտուտի անունը, որ կրճատ ԻՖԻ էր, խոխմով ասում էյին Իֆիյոպյա, ու էտ պուպուլակը բացելուց՝ հօրըս ու մօրըս ու քրոջըս ու ընձի է՛լ կանչին:

Ու երբ պուպուլակի մոտ ճառ-մառ ասին պրծան, ու հետո էլ մեզ տարան շենքն ու Սլավի գործի սենյակը ցույց տվին, ու իրա պրեզիդենտության խոխմի համար սարքած մեղալը տվին մեզ, ու էրկու հատ էլ իրեք լիտրանոց բանգա տվին, որ Սլավը զակատ էր արե ու մեջները Վահանի համար լիքը մետաղի ռուբլի էր լցրե, չնայած իրա փողի դիֆիցիտը վեչնի էր:

Ու երբ արդեն դուս էինք էկե ու տուն էինք էթում, Սլավի գյուղի ընգերները Մալիշկայից ավտոյով էկան հասան:

Գնելն էր ու Չոնոյենց նիկոլն ու երեւի Տերտրանց Ռաֆը, ու հմի լավ չեմ հիշում, թե է՛լ ով, ուշացած, բայց վերջը էկան ու հագիվհագ հասան, ու մենք իրանց հետ նորից իջանք պուպուլակն ու մի քիչ կայնանք, ու չեմ հիշում, երեւի տղեքը մի բաժակ էլ օղորմի խման, ու էտ վախտ էրկու հատ չորսը-հինգը տարեկան քյորփա էկավ, ու էտ քյորփեքը մի քանի հատ մեխակ դրին պուպուլակին:

Ու ես էտ էրեխեքին հարցրի ու ասի, բայց գիդե՞ք, Սլավը ո՛վ էր, էրեխեքն ասին, ո՞նց չգիդենք, ինքը մեր Ձմեռ Պապին էր, ու ես հաստատ գիդեմ, որ էտ էրեխեքին ոչ մեկը չէր սովորացրե, որ էտ մեխակները բերեն ու հենց էտ րոպեին դնեն Սլավի պուպուլակին, որտեվ ոչ մեկը չգիդեր, որ տղեքը գյուղից գալու են, ու որ մենք էլ հետ ենք դառնալու պուպուլակ, ու համ էլ՝ որ սովորացրած ըլնեյին էրեխեքին, իրանց կասեին, որ հենց ճառ-մառ ասելո՛ւ վախտը բերեն մեխակները:

Էրեխեքը մեխակ էին բերե, որտեվ իրանք սիրո՛ւմ էին իրանց Ձմեռ Պապուն, ու որտեվ իրանց Ձմեռ Պապին էլ իրա՛նց էր սիրում, ու դրա համար էլ նվեր էր տալի, ու որտեվ էտ օրը իրա՛նց Ձմեռ Պապին էր մեռե:

Երեվի Սարոյանն իրա Յոթանասուն հազար ասորու մեջը հենց սրա՛ համար ասում, որ իրա համար աշխարհում ոչ մի ազգ չկա, բացի էրեխեքի ազգից, ու Սարոյանն ասում ա, որ քյորփա էրեխեքի ազգից բացի՝ աշխարհում ուրիշ ո՛չ մի ազգ չկա, ու որ քյորփա էրեխեն,

հա՛յ ըլնի,
ռո՛ւս ըլնի,
թուրք ու չինացի՛ ըլնի,
թե չուկչի՛ ու նենեց,
մե՛կ ա՛նո՛ւյն ազգից ա,
քյորփեքի՛ ազգից ա,
ու մենակ մեծե՛րն են,
որ իրանց համար ազգ են հորինե ու մոռացել են,
որ մոտիկների կյանքից ու
մոտիկներին սիրելուց դենը
ուրիշ ո՛չ մի կարեվոր ազգ ու բան չկա աշխարհում,
չկա՛ ու
չի՛ էղե,
ու չի է՛լ ըլնի,
ո՛չ մի ազգ ու բան,
ո՛չ մի ազգ ու բան,
ո՛չ մի ազգ ու բան:

Ուրեմը, թե որ սիրելու բանաձեվ կա էլ, էտի մենակ էրեխե՛քը գիդեն, բայց էրեխեքն էլ անպայման մեծանում են ու անպայման մոռանո՛ւմ են էտ բանաձեվը: Էրեխեքն անպայման են մեծանում, ու համարյա անպայման էլ հազար ու մի մանր ու մեծ ստորություն են անում, շատ անգամ թեկուզ իրանցից անկախ, բայց անո՛ւմ են: Մահանա են բռնում, թե կյա՛նքն ա ըսենց, ու մանր ու մեծ ստորություն են անում, բայց ամեն անգամ, երբ ստորություն ես անում, թեկուզ մանր ստորություն, երբ օրինակ՝ քու իմացածով յանի մի փոքր սուտ ես ասում կամ մեկին նեղացնում ես, սերն ա՛նպայման ա թուլանում, ու էն էրեխայական սիրո բանաձեվն անպայման մի քիչ մոռանում ես:

Մեծերից միլիոնից մեկը կարող ա ըլնի, որ քիչ ստորություն անի ու քիչ հարամվի ու կարենա էրեխու պես սիրի ու չհաշտվի ու չդիմանա ու ինքն է՛լ մեռնի, երբ էս մեծի սիրածը մեռնի, ճիշտ ու ճիշտ, երեվի հորըս պես, կամ Տալստոյի պատմած գազանանոցի առյուծի՛ պես, որ չհաշտվան ու չդիմացան ու մեռան,

մեկը, որ իրա սիրած տղան մեռավ
մեկն է՛լ, որ իրա սիրած շունը մեռավ:

(Մի գազանանոցում առյուծին մի փոքրիկ անտեր շուն են տալի, որ ուտի, ու երբ առյուծը մոտ ա գալի շանը, շունը պառկում ա մեշկին ու խղճալի վնաստոցով պոչն ու ոտներն ա խաղացնում, ու առյուծն իրան չի ուտում ու ընգերանում ա շան հետը, բայց շունը մի օր հիվանդանում ա ու սատկում, ու առյուծը պառկում ա շան կողքն ու գլուխը դնում ա թաթերին ու ո՛չ թողում ա, որ շան դիակը վեկալեն տանեն, ոչ է՛լ բան ա ուտում, ու մի քանի օր հետո ինքն է՛լ ա սատկում):

Ու է՛ն մարդը, ով համաձայն չի Սարոյանի էս ասածին, ուրեմը արդեն մեծ ա, արդեն քիչ թե շատ հարամվել ա ու արդեն ահագին մոռացել ա սիրելու իսկական ձեվը: Ու հարո՛ւր տոկոս, սիրելու էտ իսկական ձեվը ես է՛լ չէի հիշում, երբ ռանիմացյալի բժշկին ասի, որ Սլավին թողա, որ հանգիստ մեռնի, որտեվ ո՞նց ա կարելի, որ մարդը, իսկական մարդը համաձայնի, որ իրա սիրած հարազատը մեռնի:

Էս երկրագնդի վրա համարյա մի յոթը միլիարդ մարդ կա, բայց չկա երկու մարդ, որ ճիշտ իրար նման ըլնի: Մարդը էղած-չէղածը երկո՛ւ ոտ ունի մենակ, բայց էտ յոթը միլիարդից չկա դաժե երկո՛ւ մարդ, որ ճիշտ նույն քայլվածքը ունենա, ու էլ չեմ ասում, որ չկա դաժե երկո՛ւ մարդ, որ ճի՛շտ իրար պես խոսա կամ մտածի:

Ու էտ յոթը միլիարդից երեվի մի չորսը հինգ միլիարդը մեծ ըլնի:

Ու թե որ ըսենց ա, էլ ո՞րդուց ըլնի երկու մարդ, որ ճիշտ նո՛ւյն ձեվով սիրի, այսինքը, նույն «բանաձեվո՛վ՝ սիրի:

Համարյա սաղ մեծերն էլ սիրելու իսկական ձեվը, սիրելու էն երեխայակա՛ն ձեվը, լավ չեն հիշում, բայց էլի մի քիչ հիշում են:

Հիշում են իրանց մանկությունից, ու ուզում են, որ իրանց էն մանկության ճի՛շտ ձեվով սիրեն, իսկ սիրելու մասին մնացած համարյա սա՛ղ բաներն էլ մեծերը կինոներից ու գրքերից ու սերյալներից ու մեկ էլ հայոցի դասատուների՛ց գիդեն, մեծ մասով, տափակ ու ջրիկ ու ախմախ բաներից, օրինակ, Շառլոտ Բրոնտեի Ջեյն Էյրի պես քաղցր-մեղցր վեպերից, ինչին Դեյվիդ Հերբերտ Լովրենսն ասում ա, թե էտի պոռնոգրաֆիա ա, բայց մեծերն ամենակարեվոր բաները իրանց մանկությունից են հիշում, ու երեվի սրա՛ համար ա, որ մեծերից ամե՛ն մեկը իրա՛ ձեվով ա հիշում իրա մանկության սիրո բանաձեվ ասածը, ու իրա՛ ձեվով ա սիրում:

Բայց ճիշտը, որ խոսանք, մեծերի սիրո ամենալավ բանաձեվը հենց սիրո բանաձեվ չըլնե՛լն ա, որտեվ կյա՛նքն ա էս ձեվ, որտեվ քյորփեն ա՛նպայման ա մեծանում ու վերջը դառնում ա մեծ:

Ու համ էլ ո՞վ ասաց, որ քյորփեքը սիրո բանաձեվ ունեն կամ էլ հասկանում են, թե խի՛ են սիրում ու ո՛նց են սիրում:

Քյորփեքը, մենակ քյորփեքը գիդեն, թե ո՛ւմ սիրեն, ու գիդեն, թե ո՛նց սիրեն:

Մեծերի համար է՛լ, քյորփեքի համար է՛լ աշխարհում ոչ սիրո՛ բանաձեվ կա ոչ էլ կյանքի՛ բանաձեվ, որտեվ բանաձեվը մենակ մաթեմատիկայում ա ըլնում, ու թե որ կյանքո՛ւմ էլ սիրո բանաձեվ ըլներ, հեչ էլ հետաքրքիր չէր ըլնի, ու նույն ձեվ էլ՝ թե որ կյանքի բանաձեվ ըլներ ու մենք էլ ամեն ինչ իմանայինք, իմանայինք՝ թե ամեն վարկյան ինչ ենք անելու ու ոնց ենք անելու, կամ էլ՝ ինչ ենք զգալու ու ոնց ենք զգալու, էտ ձեվ կյանքը հեչ էլ հետաքրքիր չէր ըլնի ու կըլներ լրի՛վ աննպատակ, որտեվ մեր նպատակները արդեն կիմանայինք ու դրանց կատարվել-չկատարվելը լրի՛վ հայտնի կըլներ, ու հեչ էլ հետաքրքիր չէր ըլնի:

Սերն է՛լ, կյանքն է՛լ, հետաքրքիր են ու անկրկրնելի հենց են պաճառով, որ ընենց բանաձեվ չկա՛, որ էտ բանաձեվով անսխա՛լ սիրես կամ անսխա՛լ ապրես:

Սխալը մարդու համար ա, որտեվ մարդը ռոբոտ չի, ու առանց սխալի մարդու կյանքը անհնար կըլներ:

Ու մենակ ռոբոտը կարա անսխալ «ապրի՛» ու անսխալ «սիրի՛», որտեվ ռոբոտը կակռագ իրա մեջը դրած բանաձեվերով ա «ապրում՛» ու «սիրում՛», ու հենց սրա՛ համար ա, որ չի սխալվում:

Ու հենց սրա համար էլ ես ոչ մի անգամ չհամաձայնա, որ էս կամ մյուս գրածներիս «սխալներն ուղղեմ՛», ինչքան էլ որ ընձի ուզեցան համոզեն, որտեվ տառասխալ ուղղելով կամ բառերը «սիրունացնելով ու ճոխացնելով՛» ո՛չ ախմախ ու տափակ ու անհամ գրվածքը կդառնա պատմվածք, ոչ է՛լ կյանքի կամ սիրո չեղած բանաձեվը կստեղծվի կամ կդգվի կամ կլավանա:

Սիրելու համար ուղղակի տաղանդ ա պետք, է՛ն տեսակ տաղանդ, ոնց որ իմ ախպեր Սլավն ու իմ տղա Վահանն ունեին:

Ապրելու համար էլ ա էտ տաղանդը պետք:

Որտեվ ի՛նչ էլ ասեն չասեն,

մեկ ա,

մենք սա՛ղըս էլ մի վախտ քյորփեքի՛ ազգից ենք եղե,

բայց հազա՛ր ափսոս, որ համարյա սաղըս էլ

մոռանում ու ուրանում էնք մեր մանկության ազգը,

մեր էտ ամենամաքուր, ամենաանկեղծ, ամենանբիծ,

ամենախսկակա՛ն ու միա՛կ ազգը:

01.03.2007-20.05.2012